

Նակ ամբոխը կ'աղաղակէր ըսելով. «Օրհնեալ որ գայ թագաւորութիւնդ յանուն Տեան»: Գարիսեցիներէն ոմանք ըսին անոր. Վարդապետ, սաստէ քու աչակերտներուդ. պատասխան կուտայ Յիսուս եւ կ'ըսէ. «Կ'ըսեմ ձեզի, եթէ ատոնք լռեն, քարերը (*) պիտի աղաղակեն»: Եւ աւանդութենէ զրոյց կայ թէ ոյսաննայի քարը մին էր այն քարերէն որ լեզու ելան և ըսին. «Սաղաղութիւն յերկինս և փառք ի բարձունս»: Այս քարն ալ նմանապէս բարեպաշտներու յարգանքին առարկայ եղած է (Հան. էջ 241-242):

Ուրիշ քար մըն ալ «լեզու ելած է» Յիսուսի քաղաք մտած օրը. ան կը տեսնուի քաղաքին տարբեր մէկ տեղը, Սաչի ճանապարհին մէկ փողոցին մէջ: Նոյն քարը բոլորովին սև է և ուխտաւորաց համբոյրներով իւզոտած (Han. W. էջ 24):

9. Հայոց Ս. Սեփանոսի վանքին աւանդութիւնը. — Ս. Ստեփանոսի նշխարաց գիւտը տեղի ունեցած է 415 ին: Կափարգամաղայի (գիւղ Գամաղիէլի) Ղուկիանոս քահանան նոյն գիւղի Գաբատաղեայ ազարակին մէջ կը գտնէ Ս. Ստեփանոսի նշխարները, Նիկոզիմոսի, Գամաղիէլի և անոր որդւոյն Աբիբայի նըշխարներուն հետ: Երուսաղէմի Յովհաննէս պատրարքը նշխարաց մեծ մասը հանդիսաւորութեամբ կը փոխադրէ Սիոնի վերնատունը, զոր կը վերածէ եկեղեցիի: Որոշ վկայութիւն չունինք թէ ուր թաղեցին Ս. Ստեփանոսի մարմինը, միայն Գործք Առաքելոցը կը գրէ թէ «Եւ բարձին զՍտեփանոս արք երկիւղածք,

(*) Մեր վարդապետներուն բացատրութեան համաձայն քարին դր քառով պէտք է հասկնալ **հեթանոսները** (Քար. էջ 138):